

ՏՆՕՐԵՆ-ԽՄՐԱԿԻՐԱԳՈՒՑ


Z. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան	500 դր.
Վեցամսեայ	250 »
Մուսմեսայ	150 »
Արտասահման տրվ.	70 Էր.

Բաժանորդագրութիւնք կ'սկսի մանկ ամսոյ 1 եւ 15ից

100 ՓԱՐԱ



Fondateur  
M. MAMOURIAN  
Directeur-Rédacteur en chef  
H. MAMOURIAN

„Arévelian Mamoul,  
JOURNAL ARMÉNIEN  
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ

Օրաթերթ ազգային եւ քաղաքական

# ՏԵՂԱԿԱՆ ԱԶԳ. ԿԵԱՆՔԻ ՇՈՒՐԶ

Գ.

Առաջնորդական ընտրութեան խնդրոյն առջև, ինչպէս ըսինք, իրարանցում մը դիտելի կ'ըլլայ:

Միայն համոզումներ, կարծիքներ կ'ընթացեցնեն, ընտրելի առաջնորդին անձը խնդրոյ առարկայ կ'ըստնայ, մինչդեռ լաւ գիտենք թէ դեռ որեւէ թեկնածուի մասին լրջօրէն նկատողութեան արժանի ամենազոյզն ճիշդ մը չէ գրուած:

Այսօր, եթէ չենք սխալիր, իզմիրի հայութեան մեծամասնութիւնը, կէտի մը մասին համակարծիք է. թէ երիտասարդ ու անփորձ եկեղեցական մը չը կրնար գոհացնել իզմիրցիներ, այս մասին համամիտ գտնուելէ յետոյ, այլևս շատ գիւրդին է թեկնածուի մասին համաձայնութեան գետինը մը գտնել, եթէ երբէք գտնուի՝ զիտգինէսեան լապտերով փնտռուած՝ յարմարագոյն թեկնածուն. Պոլսոյ եկեղեցական գասակարգին մէջ, ըլլայ եռանուն ցանկէն կամ գուրէնի Բայց եթէ անպատճառ առաջնորդական ընտրութիւն ընել յարմարագոյն համարուի, պիտի ստիպուին յարմարագոյն ընտրելի մը գտնել և անոր վրայ կեդրոնացնել համախորհուրդ Գաւառ. ժողովոյ քուէները:

Ազգային ներքին գործոց մէջ չենք ըմբռնիր թէ համերաշխաբար՝ գործել օգտակար կրնայ ըլլալ թէ իրարու դէմ պիտուելով և իրարու խօսք չհասկնալ ուխտելով:

Առաջին պարագան նախընտրելի պէտք է ըլլայ, բանութեան, սպառնալիքի օրերը կարծենք վերջ գտած ըլլալու են և տեղւոյս հանգստանքները ևս թոյլատու չեն կրնար ըլլալ վէճերու և աւելորդ անհասկացողութիւններու: Հիւսիսային իշխանութիւնները չենք կարծեր որ թուրք քաղաքականութեան հետ տեսողները ըլլան, որոնք միակ փափաքն էր ազգին մէջ երկպառակութիւն, ներ տեսնել և եթէ անոնք զոյգութիւն չունենային, դանտք ստեղծելու միջոցներ խորհիր:

Եթէ երեսփոխանական ընտրութիւնները կատարելու փափաքողները, ինչ որ ապացուցինք թէ պէթ առայժմ անկարելի է. կ'կարծեն Պոլսոյ ընտրութեանց եղանակը հոս ևս կ'իրարկուի. կ'ցուցնեն որ մեծապէս կ'սխալին, որովհետեւ իզմիր՝ Պոլսոյ չէ և հոս քաղաքին անգործութեան նախանձախնդիր են իշխանութիւնք:

Իսկ եթէ կ'կարծեն մեծամասնութիւն չունի, այդ մասին ալ կ'սխալին, որովհետեւ առայժմ նոյնիսկ իրենց կուսակցութեան մէջ, փոքրամասնութիւն մը կ'կազմէին և ժողովուրդը իր ուղիղ քննադէն առաջնորդուած պիտի թօթալիքէ իր անտարբերութիւնը և չպիտի թողու որ ազգային գործերէ ձեռք քաշեն այն բոլոր աչքառու դէմքերը, որոնք ի հարկին կրնան բարոյապէս ու նիւթապէս օգտակար հանդիսանալ ժողովուրդին կարօտութիւններուն:

Ազգային գործոց միջամուխ ըլլալու համար նախ և առաջ կ'պահանջուի ենթակայէն իր անձնական գործոց մէջ իր ճարտարութիւնը և ձեռնհասութիւնը մինչդեռ այդ երիտասարդ անուանուածները դեռ իրենց ապագան չպարտաստած, իրենց կեանքի ուղին չզգած, երբ յանգին միջամուխ դառնալ ազգ. գործոց շատ տխուր քաղաքար մը կուտան իրենց նկարագրին ու մտքի հասունութեան վրայ:

Երիտասարդութիւն կ'ըսենք ու կ'իրթանք, սակայն չգործենք ակնարկ մը աշխարհի քաղաքական ակնաւոր անհատներու վրայ, որոնք այսօր պատասխանատու անարկու բեռեր շարկած են, և ցոյց չտան մեզի որեւէ նախարար մը, երեսփոխան մը որ երիտասարդ տարիքին մէջ գտնուի Բանի՞ տարեկան է այսօր ոչ միայն Անգլիոյ՝ այլ աշխարհի ճակատագրերը իր լեզուին ծայրը ունեցող Լոյս Չօրձ, քանի՞ տարեկան է Վէնիիցէլոս, — միջանկեալ չմտնալով իշխել թէ Կոստանդինոյի նախկին թագաւորը չնորհիւ իր երիտասարդութեան դէպի անդունդ պիտի պահպիլի Թուրքիայում, — քանի տարեկան է Տէչանիլ, Միլոսան, վերջապէս այն բոլոր քաղաքական անձնաւորութիւնները, որոնք կ'վարեն իրենց երկիրներուն ճակատագրերը:

Դեռ թարմ է յիշատակը իթիհատական ջոկերին, երիտասարդ թուրքերէ կազմուած, անփորձ, յաւանտուտ որոց գործունէութեան արդիւնքները կ'վայելենք ի վնաս թուրքերու և ի շահ ճնշուած ազգութիւններուն:

Պիտի պայ ժամանակը որ մեր այժմու յարգելի չուզած հայրերը և հօրեղբայրները յոգնած ու պարտաստած պիտի հեռանան ասպարէզէն, սակայն մինչև այն ժամանակ, այժմ պատրաստուող հօրեղբայրները հասունցած պիտի ըլլան փորձառութեան դասեր ստացած և ի վիճակի շարունակելու իրենց հայրերուն և հօրեղբայրներուն սկսած գործը:

Սե տեսանք արժէքը երիտասարդ ու անփորձ վարիչներու, որոնք առանց ուսանելու՝ յաւանտուտ ուսուցանել և կը ցուինք անոնց վրայ, որոնք առանց նկատողութեան առնելու ազգին օգուտը, միմիայն անձնականութիւնէ տարուած կ'լանան շուրջ պիտուել և այդ պիտուելու օգուտը անհարկի ճարտարութեանը ունենալ:

Այս բոլորէն վերջ յիշումս կ'յանդինք սա որոշ եզրակացութեան:

- Ա.) Գաւառական ժողովոյ ցրուիլը հակաօրինական է, որովհետեւ պատերազմի շրջանը չեղեալ համարած է այդ ժողովը:
- Բ.) Գաւառ. ժողովի նորոգ ընտրութիւնը անհնար է ներկայ ժամանակին մէջ:
- Գ.) Առաջնորդական ընտրութիւն կատարել հնար է, որովհետեւ ընտրելի

մը վրայ համաձայնիլ շատ դիւրին է, եթէ ամեն կողմէ բարիկամեցողութիւն մը ցոյց տրուի, քանի որ ոչ մէկ կողմ առայժմ իր որոշ թեկնածուն ունի:

Իսկ հակառակ պարագային եթէ այս բոլոր օրինական կէտերը նկատի չառնելով ամեն բան խանգարելու ձեռնարկներ ըլլան, այն ժամանակ պիտի պատահի անխուսափելին:

Ա.) Անհնար ըլլալով երեսփոխանական ընտրութեան ձեռնարկել, ազգային գործերը պիտի ստանան անկերպարան ու քառային վիճակ մը:

Բ.) Բոլոր կարեւոր դէմքերը որ այսօր ազգին սրտները կ'համարուին, գործէ պիտի հեռանան և պիտի տուժեն մեր ամենքիս գուրգուրանքին ու հոգաւորութեան առարկայ դարձող որբերը, աղքատները, տարագիրները, հիւանդները և ի մասնաւորի մեր կրթական հաստատութիւնները:

Գ.) Առաջնորդական ընտրութեան գործը պիտի մնայ անկերպարան ու պիտի յետաձգուի ակամայ կերպով առ ի չգոյն Գաւառական ժողովի:

Դ.) Եթէ նախկին տեղապահը յամառի և Պատրիարքարանէն ալ չլինք չարգիլեն և վերադառնայ իզմիր, յիտին չար քան զառաջինն պիտի ըլլայ, իր չորս կողմ պիտի գտնէ ամայութիւն մը և իր շատագոյն ու զրգաւած տղերքներով չպիտի յաղդի որեւէ կերպով օգտակար գործ մը կատարել:

Ե.) Իսկ եթէ Պատրիարքարանը նոր տեղապահ մը չլինք, անոր գործը ևս պիտի դժուարանայ, որովհետեւ կողմալուծուած ժողովները կրկին կազմակերպել չպիտի յաղդի, Գաւառ. ժողովի չզոյգութեան և նորի մը ընտրութեան անկարելիութեան առջև:

Եւ այս բոլորէն ինչ կերպով պիտի օգտուի ազգը, մեր ըմբռնելու կարողութենէն գերիվեր կ'գտնենք:

Հ. Մ.

## ՆԱՅԵԼՈՒՄ ՄԵՐ

Միրքի նոր խումբ մը հոստած է իզմիր և սկսած իր ներկայացումները շարքին:

Այդ տեսակ խաղերով հետաքրքրուողներու համար բաւական անմեղ ժամանց մըն է, որ ժամանակ հանդիսականը տկանատես կ'ըլլայ մարմնամարզի, ճարտարութեան, թեթեւաշարժութեան, հաւատարակչութեան, ուժի, յանդգնութեան և նըման մարդկային խաղերու:

Բայց ամենէ ուշադրութեան առարկայ եղածը Վառձներն են:

Ինչ կայ գարմանալի, անոնք պաշտօն ունին ժողովուրդը գտարձանցնելու իրենց խաղերով, խաղեր՝ որոնք բաւականէն աւելի համով-անհամութիւն մը ունին և բունտգրոսիկ ճիծող մը կ'պատճառեն հանդիսականներու:

Ոեղձ մարդիկ, որոնց պաշտօնն է իրենց խեղկատակութիւնը երով զուարճացնել, իրենց ինչալ ինչալ խեղագրելու, իրենց ապտակահարութիւններով զուարթութիւն սփռել և իրենց ցրտակրտուքներով ծափեր խելի:

Անոնք իրենց պաշտօնը կը կատարեն, հանդիսականներէ իրենց ստացած մուտքի զուարթութեան փոխարէն, պարտականութիւն մը ունին, խղճի մտք և աւելիով կ'ուզեն փոխարինել:

Կրկէսի մը մէջ, սահմանափակ հանդիսականներու առջև անոնք ամեն տեսակ խեղկատակութիւններու յանձնառու կ'ըլլան, այդ իրենց իրաւունքըն է. սակայն ինչ գիտնան անոնք, որ աշխարհի կրկէսին վրայ առանց իրենց պէս վեճերին չպարելու ու մասնաւորապէս ծափելու, անչպար ու չձգտուած խեղկատակներ կ'գտնուին:

Ոեղկատակներ՝ պաշտօնական տարազի տակ, խեղկատակներ՝ հասարակական պաշտօններու մէջ, խեղկատակներ՝ գանապան ասպարէզներու մէջ, որոնք ամեն առթիւ և ամեն պարագայի կ'զուարճացնեն մարդկութիւնը իրենց ծամածռութիւններով, իրենց մեղքաւորութիւններով, վերջապէս ամեն առթիւ օգուտ քաղելով:

Եւ ասոնք շատ աւելի արգահա-

տելի են քան այն քառուները, որոնք իրենց պաշտօնը կ'կատարեն խղճի մտք և իրենց պարտականութեան պիտակցութեամբ:

ԵՍ

## ՄՏԱՆԻՆ ՊԱՏԿԵՐ

Յոռնագոյն առինքնող օժգոնութիւն մը, խորհալիսնց ու պնդացող սեւ աչքեր, որոնք նուր յօնքերու եւ ստեղծութեան ծարձիչներու ձայ կը ցանալ վարագուրել իրենց արձակած սուր կայծերը:

Նիհար, նուր ու կանոնաւոր կազմուածքով, առանց օրուս նորածնութեան հլու հպասակող մը ըլլալու, իր յասուկ ճաշակը ու պշտիւրութիւնը անեղծ պահելու ջանալու-ձիւն ցոյց կուտայ, իր բնական վայելչութեան ինքնագիտակցութիւնը ունենալով:

Արայայտուելու եւ խօսելու դիւրութեամբ մը օժտուած տղային տկարակող անկողնութեան զարգացող կը ներշնչի, անսեղեւն ու պարզ սրբի մը սպառնութիւնը ներշնչելով, եւ իրաւի կողմական ներշնչութեամբն ու իրական սուր յասուկ ծածկանութեան իր հարկը վճարելով հանդերձ, կը կրէ անկողն ու մանկուկական գեղեցիկ սիրտ մը, հակամէջ ըլլալով խաղաղութեան, մասնաւոր իր սեռականներու այն զատակարգին՝ որ ծածկանութեան ու կեղծիքի մարմնացում մըն է գարծած:

Իր ամուսնոյն աջ բողոքի անոր օգնականը, ընտրած է փայլուն ու պարտախոս ապարէզ մը, անշուշտ չհակնկալելով խախտոյս ու քաջալերանք եւ իր պարտականութիւնը կատարած ըլլալու միակ գոհունակութիւնը մղուած կուտայ եռանդ կը ներշնչէ իր պարտականութիւնը անմեղի կատարելու հանդէպ իր սեռականներուն մասաղ սերունդին, հանդէպ իր ազգին ու իր ամուսնոյն, որու նուիրած է ոչ միայն իր սիրտը, այլ նաեւ իր լզարգացած մտքի արգասիքը:

Կազմուած նկարագրի մը հետ կը ներկայանայ նաեւ իրեւ ուսումնասիրելու արժանի քիպա մը, լաւ մտեղեցի, առնչին օրն-սեռութեան բոլոր գաղտնիքներուն գիտակ, կառավարելու եւ ուղղութիւն տալու կարողութեամբ մը օժտուած, սիրաշունչ ու նրբութիւններուն ծանօթ, աշխատասէր ու մեղուաշուն, կը վարէ միտքիսակ, չափուած ու գոնուած կեանք մը եւ գնահատելի համակերպութեամբ մը՝ տաւանմութեան ու մեղուաւորութեան միայն կը կարծէ գոնել ձերքի ու սրբի կատարեալ անգործութիւն:

Միայն կամ ուղիղ, այդ մեղուաւորութիւնը, մեղադրելի չկրնար համարուի, եւ ոչ ալ զարմանալի, որովհետեւ՝ ինք իր մէջ եւ իր անմիջական պարագաներով երբ բաւարարութիւն կը գտնէ եւ աշխարհի ունայնութեան, ազնուութեան, զգուշիւրութեան լիովին հարող եղած, — անցնելու դուռնագոյն փորձառական դասընթացով մը, — անկէ կ'որոշի եւ



Տոգեկան միապագայ ու պայծառ մեծարարի մը մէջ ապրած ըլլալու պատանքովը կը գոհանայ, երջանիկ է ու նախանձին, թողով ուրիշներու աշխարհի ունայնութիւններով գրասուր, պսոջնելով իրենց անպատակ ու սնանք գոյութիւնը:

ՎԱՐՈՒԹԱՆ

ՀԱՅԸ ՀԱՅՈՒՆ ԴԱՇՆԱԿԻՑ

Հայը հայուն պիտի ըլլայ դաշնակցից...

Ահա ապիկ հին ճշմարտութիւն մը, որ չընայած մեծագույն իր ծամծամած և ծեծուած ըլլալուն, այսօր ալ կը ներկայանայ որպէս օրուան գերագոյն պահանջը:

Հասարակ տրամաբանութիւնը պիտի հասկնայ ընթացողին. թէ ինչի պահանջ որ կայ, հետևաբար անկախ տակաւին չը կայ, որ կը պահանջուի: Գաղտնիք մը չէ, պատմական այս ծանրակշիռ և անակնկալներով յղի մօտենալին, հայերս հանդէս եկանք իրարմէ բաժան ազանդաւորական և խմբակցական տարբերութիւններով զինուած, անձնական գոնձ սնտուրութիւններու, ենթակիցով սղագային խոչորագոյն խնդիրները:

Ի՞նչ եղաւ հետևանքը — այսօր արդէն ամենուս աչքին առջև է:

Մինչև այժմ լռելեայն միտք մաշեցնող կասկածները այսօր արդէն ըստպատմական վտանգ մը կը ներկայացնեն:

Ազգայնական մէջ հայութեան տառապեցու և կոտորածի մատուցումը, նուազ, Արէշ, Գեօրջա, Շամախի և վերջապէս մեր անկախութեան օրրան Ղարաբաղը կորսն, նոյն վիճակը և հետևաբար կիլիկիոյ մէջ:

Ազգայնական և կիլիկիոյ նախափորձն էին, որմէ յետոյ միևնոյն ճակատագրին պիտի ենթարկուէին թուրքոյ մնացած վայրերու հայերը, Սևանիան հարապետութիւնն ալ պիտի փակուէր խոռոչին մէջ — խեղդամահ ըլլալու հրկիւղէն ջգայնացած...

Ազգայնական և կիլիկիոյ մէջ հայերու դրութեան համեմատական քարտ-լաւուրը, որ կատարուեցաւ Կ. Պոլսի և Բագուի փաստացի գրասուձէն, ետք, բնաւ երբէք չեն կարող հանգստացնել մեզ:

Վտանգը չէ անհետացած... Այս յոռետեսութիւն մըն է և այլ կերպ ալ չէ կարող ըլլալ, վասն զի ժամանակակից քաղաքականութեան և զեղեցիկ սկզբունքներուն ետեւը պահուած սակարաններու անյազուրդ շահերուն համար այլևս լաւատես չենք կրնար ըլլալ...

Յետին նպատակներով Ղարաբաղի անառիկ բարձունքները թիւրքերուն տալու և կիլիկիոյ մէջ բամպակի շահատան մը ստեղծելու համար յիսուն հազար հայերու գանկերու վրայ իրենց իրաւունք ստեղծող կոտորածութիւնները տակաւին շատ անախտութեաններու գոնէ կրնան բանալ մեզի համար...

Մենք բազմին ձգուած եզրիկներ ենք, որովհետեւ կ'զգանք, թէ անշահախնդիր բարեկամ մը չի կրցանք ունենալ մեր անթիւ զոհողութեան փոխարէն...

Ամեն անգամ որ կարգը հայուն եկաւ — կամ ապիկարութեան մատնուելեցան և կամ շահերու անհամապատասխանութիւն մը յառաջ եկաւ, ամենաչինքն քանի մէջ իրենց շահը փրկուեցին, փոքր զոհողութիւն անդամ չընելու համար իրենց արատանամ սկզբունքները զոհեցին, իրենց թքած լիզեցին...

Հայը հայուն դաշնակից, այսու հետեւ այս է տիրապետելու ամենուս մտքին և կոտորածներուն:

Մեզի գաշնակիցներ ունեցած ըլլալուն պատրաստին և ինքնախաբէութեան ենք մատնուած եղիք մենք:

Այո, դաշնակիցներ էինք պատերազմի տեսն, բայց հաշուեյարդարութեան միջոցին ճոխ և բազմախորտիկ սեղանին փշրանքներուն զիմող մըլաթցիկաններէ տարբեր ընդունելութիւն

չը գտանք: Վտանքը ինքնապահովութեան շահերը մերինն են, աւելի փնտռուեցան, պատերազմի միջոցին իրենց պատերազմութեան անկախութիւնը մերինն են առաջ ճանչուեցաւ:

Վերջապէս թիւրքական միլի շարժումը՝ ազգերու ինքնորոշման կէտ տին յարմարեցնելով՝ բանակցելու հրահարութեաններ փնտռեցին, Քէմալական «ազգային խորհուրդ»ի քով որքան Ֆրանսական սիվիլ սպաներ գետնորոշեցան, սմինսխառ Ֆրանսական գրուման, ներքե գտնուող երկրամասի մը մէջ քան հազար հայերու շարդէն վերջ, թիւրքերուն զէմ տանուելիք գաղտնական միջոցներու կարգադրութիւնէն, զժգոհ Ֆրանսական թիւրքերը, այս կարգադրութիւնը չէզոքացնելու նպատակով, թիւրքական կառավարութեան հետ բանակցութիւններ սկսելու թիւրքականները ըրին իրենց կառավարութեան...

Աստիք չափ ու կշիռներ են, որայսօր մեր ձեռքը կուտան: Ապագային մենք կրնանք գործածել քայ գործիները, քանի որ ներկայ հաշուեյարդարութիւնը մօտ ապագայի մէջ նոր փոփոխութիւններու պիտի կարտաւ, և այդ տեսն մենք կրնանք իրենց ըսել թէ այս չափն ու կշիռը 1920 թուականին իրենք մեզի տուել էին — մեր ապագայ գործունէութեան պահուն արդարութիւնը չափելու և կշիռելու համար:

Իսկ մինչև այդ հետեւելու ենք երկար փորձութիւններէ անցած և տակաւին իր այժմեութիւնն ու հրամայողականութիւնը չկորսնցուցած օրուան նշանաբանին:

Հայը հայուն դաշնակից: (Հայաստանի Ձայն) Գ. Չ.

ԱՋԱՏ ԽՍՐ

ՅՈՒՍԱԼ ԵՒ ՍՊԱՍՍԵԼ

Մօտաւորապէս չորս ամիսէ ի վեր Քաղաքականէն Գաւառական և փոխադարձաբար շրջան ընող ուսուցիչներուն ամսականին 50% յաւելումի խնդիրը վերջնականապէս ընդունուեցաւ: Գաւ. ժողովոյ չորեքշաբթի Կիլիկիոյ մէջ միաձայնութեամբ և բանաձեւով մը որոշուեցաւ զի կողմէն Քաղաքականին Այս բանաձեւին համեմատ Քաղ. ժողովը յետեւել չորս ամսականներու գումարը հայժողովով Ուսում. խորհրդոյ պիտի յանձնէ որպէսզի ան յարմարագոյն եղանակով ընէ վճարումները:

Այս քանի մը տողով համարուող պարզուած եզրակացութեանը յանդէս կամար մեր յարգելի պատգամատիրներուն մէջ քանիին կողմէն, եղած վիճարանութիւնները բաւական բուռն եղան բուռն կ'ընեն, որովհետեւ քիչ մնաց նախքան Քաղաքականը պարտաւանքի ենթարկուէր առանց Գաւ. ժողովոյ համաձայնութեան սպասելու ուսուցիչներու ամսականին յաւելումներ ընելով պիտե՞նք բեռնաւորած ըլլալու ստրատեղութեամբ:

Բարեբաղդար երեսփոխաններէն ոմանք պատասխանելով եղած հարցապնդումներուն գոնէնակութիւն յայտնեցին որ անհրաժեշտ պէտքի մըսիրտ յօծար ընդառաջ ենելով Մարտ և Ապրիլ ամսականներն ալ Պ. Միլիթարներ կտակով վարձարանոց յատկացուած գումարէն վճարելու որոշումը տուած և գործադրած էր, իսկ յաւելումի խնդիրն ալ սկզբունքով ընդունելով լսեց Պ. Կիլիկիականի զիտողութիւնները: Յարգելի երեսփոխանը առաջարկ բերու որ յաւելումը կատարուի ուսուցիչներու թոշակին խտտոր համեմատութեամբ: Գիտել արուեցաւ որ այդ հարցը լուծել Գաւ. ժողովոյ գործը չէր, և անօրինակ անիրաւութիւն մը պիտի ըլլար խտտոր համեմատութեան ենթարկել յաւելումն բաշխու մը, մասնաւոր որ ան ուսուցիչներու ամսականին հարկերն վրայ կը տըրէր և արդէն 919—20 դպրոց, շրջանին սկիզբը ամսականները չափուած և ձեռուած են երկուսն ուսուցիչներուն կարեքին և վիճակին

վրայ ը'զմ' րուպէս և անոնց յանձնարած աշխատութեան քանակին վրայ մասնաւորապէս իսկ թէ ուսուցիչներ կան որոնք 80—100 սովի ամսական կուսեն ըստ մեր ազատական? և բանաւորական? օրկանին, այդ բոլորովն անհիմն է: 50էն աւելի ամսական աւնող ուսուցիչ չկայ, կերել թէ Առաջնորդարանի պաշտօնէութիւնը շփոթեր է ուսուցչութեան հետ:

Անշուշտ Ուսում խորհուրդը, զիտել տուաւ Պ. Կիլիկիական, պիտի սիրէ հետեւի այն դրութեան որուն համեմատ արդէն ընթացք տրուած և երկու ամսավճարներն ալ կատարուած ըլլալով ուսուցիչներն ոչ մէկուն կողմէն ոչ մէկ զիտողութիւն կամ տըրտուելի տեղի ունեցած չէ այդ մասին: Երեսփոխաններու մեծ մասը ձայնակցեցաւ յարգելի տըրքութեան և վերջ գտաւ վիճարանութիւնը ճանօթ բանաձեւով, որը երկիցս և երկցս բարեփոխութեան անցնելէ ետքը ը'զմ' րուպէս միաձայնութեամբ:

Բայց թէ ե՞րբ պիտի վճարուին յիշեալ չորս ամսականի յետեւել յաւելումները, ատկա խնդրակոն է, որովհետեւ թէ Տեսնականին և թէ Հայր. Տուրքի անսուկները բացարձակապէս դատարկ են: Ուսուցիչներուն կը մնայ յուսով և սպասել:

ԳԻՏՈՂ

Ազգային Անցու դարձ

Մտացանք Ազգ. Կեդր. Որբանոցի միամեայ տեղեկագիրը 1919 Յունվ.—31 Դեկտ. 70 էջէ բաղկացեալ ստուար գրքոյկ մը, որու մէջ մանրամասնօրէն նշանակուած են այրուբնական կարգով որբանոցին մէջ պատասպարուող որբերու բոլոր անունները, փոխան որբադրութեան եղած վճարումները, նուիրատուութիւնները և ապա տեղեկագրին բաժինը, որ բաժնուած է զանազան զընտններու, որոց մէջ տեղեկութիւններ կը տրուին նախնական պատրաստութեանց, որբերու վիճակին, ֆիզիքական խնամքի, կրթութեան, իմացական և բարոյական կրթութեան, վիճակագրական բաժնով և ի վերջէ կցուած ընդհ. հաշուեկշիռն մասին լըրաքուցիչ տեղեկութիւններով: Յարգելի իմաստասէրներու հաստատութիւն մը այս տեսակ կատարեալ տեղեկագիր մը չէր հրատարակած որու մասին պիտի խօսինք առանձին յոյուածով մը:

— Մեր խորին շնորհակալութիւնները կ'յայտենք «Հայ Կիլի» շարձարարութիւնը (կզն. խմբագրութեան, որ պրօպագանդ տողերով արձանագրած էր մեր մօրաբքով՝ Տիկին Վարդուհի Գ. Չիլիկիեանի մահուան գոծը, միևնոյն ժամանակ հանուցելոյն հասարակական կեանքի մէջ ունեցած գործունէութեան մասին ևս նուիրելով տողեր:

— Տեղւոյս Հնչակեան կուսակցութիւնը լըր ստացած է որ մօտերս Իզմիր կ'հասնին պուլկար բանակի մէջ սպայութեան աստիճան ոտացող սեթ հայ զինուորականներ, անցեալ օր արդէն քաղաքէս անցած է Պ. Գրիգոր Սարգիսեան, որ պուլկար բանակի մէջ յարգուած դիրք մը ունեցած է և պատուուած կարգ մը զին. շքանշաններով:

— Էտրենէցի Օր. Նուարդ Արտաշէս Արեւազարեան Սիւրբիւրէճիւր թագէն կ'գտնուի Գրնըզ և որբազըրուած է Պ. Միւրոպ Տապանեանէ, եթէ այդ որբուհին ազգակոններէն կը գտնուին, կրնան վերոյիշեալ հասցէին զիմել: Այս տողերուն հրատարակութիւնը կ'խնդրենք մեր Պօլսոյ պաշտօնակիցներէն:

— Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան Կ. գործադիր մարմինը կը խընդրէ մեզմէ ծանուցանել, թէ շնորհակալութեամբ ստացած է Մանիսայի մասնաձեւիկին նախաձեռնութեամբ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան Փոնտին ի նպատակ 35036 զըրը, որու մասնաւորան ցանկը պիտի հրատարակուի

Իզմիրի շէնքին մէջ նոր նպատակով տեղի ունեցած դրամահաւաքութեան տարուածին: Մինչ այդ՝ Գործ. մարմինը մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնէ Մանիսայի ազգայիններու և թագ. խորհուրդին որ գիտցան զնահատել կիլիկեան ազատագրումի գործին մեծութիւնը և անհրաժեշտութիւնը:

— Սմբագրութիւնս իր վշտացութիւնները կ'նկարագրէ Պ. և Տ. Շարլ Կիլիկեանի, որ զժգագրութիւնը ունեցած են կորսնցնելու իրենց եռամեայ ազնիակար՝ Միլիթի Կիլիկեանը:

— Գաւառ անական խորհուրդը մասնաւոր գրով մը զիմած Քաղ. ժողովոյ, խնդրելու համար որ Առաջնորդարանի մէջ տեղ մը յատկացուի խորհուրդի նախտեսն համար, Ժամանակէ մը ի վեր իրեն յատկացուած նախկին քահանայից սենեակը անյարմար ըլլալով այդպիսի խորհուրդի մը ժողովներուն, ամենուս ակնարկին ու ականջին տակ Քաղ. ժողովը այնպէս կ'կարծենք թէ բաւական նեղութիւն պիտի կուէ Առաջնորդարանի մէջ սենեակ մը գտնուելու, ուր կը տրէ ամենախալախատակ զրոթիւն մը, տեղի ունեցած շինութիւնէն ի վեր թերեւ Քաղ. ժողովը մէկ երկու սենեակներու պատերը փլցնել տայ, ժողով գումարելու յարմար վայր մը ստեղծելու համար:

Ս. Գ. Հ. կուսակցութիւնը կ'խնդրէ մեզմէ ծանուցանել թէ՛ այն հայ կամ մաւրները որոնք պիտի մեկնին, կամ մաւրական բանակէն պիտի ստանան Մէլիսին հասած օրերինէն սկսեալ, բացի համազգեանէն, ուստեսեղէնէն և ազգամոթեքէն, օրական մէկ սակի գին վարձք Փուլիսցիներու համար արձանագրութիւնները որոշած են կամաւորներու արձանագրութիւն կատարել երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրեր ժ. 8—10, Կիլիկիան Սկուսի մէջ:

— Յաւանջկայ Հինգշաբթի օր Կ. Ե. ժամը 5—7 տեղի կ'ունենայ Սթորթիկի թատերարարին մէջ զեղրուեցական շքեղ ցերեկոյթ մը Հնչակեան կուսակցութեան կանանց Մասնաձեւիկին կողմէ, ի նպատակ կիլիկիոյ հերոսներու վիրակապին Իզմիրի երկսեսու հասարակութիւնը անշուշտ պիտի քաջալիւրէ սոյն ցերեկոյթը, ուր պիտի արտասանուին զանազան մօտջօկներ, այդ հանդէսին պիտի մասնակցին գեարուեստագէտներ և պիտի կատարեն կենդանի պատկերներ: Մուտքի գին նշանակուած է 500, 250, 150 և 50 զըր:

Ս. Գ. Հնչակեան ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ իր անտեսանալի ըրկերով Կարպետ Էլիկիեանի վաղաժամ մահուան տխուր առիթով իր օրտազին ցաւակցութիւնները կը յայտնէ ծնողքին և պարսպաններուն:

Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան Իզմիրի շրջանի թշուա հայութեան ինքնապաշտպանութեան կախին մէջ, հերոսաբար ինկող խմբակետ ընկ. Տոնիկի և խուճի ընկերներուն յիշատակ յարգելու համար 8 Օգոստոս կիրակի օրը կը հռչակէ սուգի օր և կը պարտադրէ բոլոր Հնչակեան շարքերը որ մասնակցին յարգանքի այս խաղաղ ցոյցին:

Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան Իզմիրի մասնաձեւիկի հետեւել խմբակցութիւնները նշանակուած օրերուն անպայման պէտք է ներկայ գտնուին Կիլիկեան սկուսը ժամը 6—7:

Փարամազ խուճը՝ Բշ. Արխանեստ խուճը՝ Գշ. Տօթթ. Պէնէ խուճը՝ Գշ. Ստան խուճը՝ Եշ. Մուրատ խուճը՝ Ուր. Մարքս խուճը՝ Շր.

Տէր և Տիկին Հ. Կիլիկեան և զաւակունք, Տեար Յ. Սահակեան և համայն ազգականք իրենց շնորհակալութիւնները կ'յայտեն ամեն անոնց որ հաճեցան ներկայ գտնուել:

Պ. ԿԱՐԱՊԵՏ ԷԿԻՆԼԵԱՆԻ յուզարկաւորութեան տխուր հանդէսին և իրենց վշտակցութիւնները յայտնեցին այս տխուր մահուան առթիւ:



Կ Ի Լ Ի Կ Ե Ա Ն Լ Պ Ե Բ Ե Բ

ՁԱՅՆ ՄԸ ԾԻՍԱՅՈՂ ԱԻԵՐԱԿՆԵՐԷՆ

(Մեր հանձնարարը, ընդհանրապես)

Մէրսին 29—Յուլիս 1920

Մերին Հայրենակիցներ,

Կացութիւնը որ այս պահուստ ստեղծուած է և բովանդակ կրկնիկով մէջ, ունի արտասովոր և բացառիկ հանգամանք մը, այս պահուստ կրկնիկան հայու- թիւնը դերագոյն և գծուարին ճիգ մը կատարելու վրայ է նուիրական նպա- տակի մը իրագործումին համար, անոնք պատրաստ կը գտնուին ամբողջական զոհարարութի իտէպի մը սիրոյն որ ամբողջ ազգինն է այդ, կրկնիկան հայու- թիւնը անքաղ անձն ինչ, աչքը յառած է զէպի իւր հեռուար եղբայրները:

Ի՞նչ են արգեօք իւր պահանջները:

Վստահարար ատոնք ողորմութիւն չեն հայեր:

Ատոնք նիւթաֆիզիքական անյետաձգելի պահանջք կամ խնդրանք են, շիզը և հոգին իւր հեռուար իտէպիներուն և փափաքանոց:

Արգեօք ի՞նչո՞ւ անզգ սյ կը մնաք Ձեր կրկնիկայի եղբայր այդքան ազե- խարշ կոչերուն ու ազաղակներուն:

Արգեօք դիւցազնական մաքառումի, այս կոչին տոջն ծալլած թեւերով անզգայ ու անշարժ պիտի մնաք դարձեալ դուք պատուական հեռուար հայու- թիւն:

Արգեօք իւր ողորմութիւն պիտի ըմբռնէք զայն և իւր այն պիտի նետէք Ձեր անպատուարի լաման այդ ազատագրումի գանձանակին մէջ:

Արգեօք հասարակաց վսեմ իտէպի մը յաղթանակին համար խնդրուած այս մասնակցութիւնը ինչպէ՞ս պիտի ըմբռնէք դուք հայեր:

Պէտք է պատռէք սիրտը ամեն կրկնիկացուն կարգալու համար հոն թէ՛ ինչե՞ր կան քանդակուած հայրենիքի ծխացող աւերակներու այդ զոհարարուող հոգիներուն խորքը:

Այլևս անցած պէտք է համարի ատենը «մուրալու» դիրքը տալու մեզ, և «ողորմելու» քաժինը ձեզ...:

Մենք չենք մուրար, չենք ուզեր, այլ կը պարտագրենք զայն ձեզ իւր տուրք մը փրկութեան:

Իսկ դուք պարտք զոհարարուիլ ձեր քսակն ու անձը ի հարկին մեզ, իւր ազգային անյետաձգելի պէտք մը տրիտուր:

Քանզի կրկնիկան «Մեր և Ձերն է», Հայութիւնը անբաժան է և պէտք ունի այնքան իրական ու դրական հայրենասիրութեան ժէսթի մը, ըլլայ նիւթա- կան ըլլայ ֆիզիքական հոգի վրայ:

Շատ մը ազաղակող կոչեր հրատարակուեցան ամեն կողմ, մէկ անաղանգ միայն կը թիթայ հոն պաղատական, անյետաձգելի, զրամ, զրամ... զրամ ապրելու, զրամ գինուելու, զրամ փառքով մեռնելու, վերջապէս կոտորի և յաղ- թանակելու համար, իսկ այսօր զրամին հետ զուգընթացաբար բազկի ուժի, մարդուած ու կըթուած բարձր աստիճանի և պարզ զինուորականի պէտքը և- րեւան եկաւ կրկնիկով մէջ, յորմէ հետէ Յրա՛նս բարձր իշխանութիւնք համա- կր կարգադրութեամբ մը քաղաքապետ ուժեր սկսան պաշտօնի կոչել ամե- նուերը:

Մերիկներ, անոնք որ նիւթական գետնի վրայ չեն կրնար օդնել կրկնիկ- ացուն թող իրենց վրիժառու բազուկները տրամադրեն ատոր քաջամարտիկ խումբերուն թիւը ստուարացնելու համար, դարուար թշնամուցն խորխու ուժը խորակելու գործին մէջ:

Այլևս հազար քաղցր երգէն, ու սնթիւ յուզիչ ճառերէն աւելի մեզ պէտք է այսօր փրկարար գործ, ատոնք ալ պէտք է վերապահենք յետ յաղ- թանակի:

Ինչո՞ւ լքուած ու ձգուած մնաց կրկնիկան իւր հեռուար եղբայրակիցներէն բախտաւոր, կամ անբաւարար չափով ձեռք երկնցուի իրեն այս բախտորոշ վայրկեաններուն, անիկա ընտ չի համեմատի մեր պահանջին և արտասո- մանի պատուական հայութեան բարձր պատուոյն:

Անձնագրումի բազմին վրան իսկ գաղթէն նոր գարձած հայութիւնը ա- ռաւել պարտաճանաչ գտնուեցաւ իւր գրական մասնակցութեամբ անձնա- պաշտպանութեան խոշոր պէտքերուն քան՝ իւր հեռուար հանգիստ ու խաղաղ արիւնակիցները որոց մօրթը սղաւտ մնաց չէթէներու տրմարմէն, ետթաղա- նէն ու այլազան սարսափներէն...:

Կարծեմ այլևս հնչած է ժամը մեզ համար որ զգանք վայրկեանին վսեմ նշանակութիւնը և կատարինք մեր նուիրական պարտականութիւնը:

Աւելին աւելորդ է սիրելիներ, անմահացէք և անմահացուցէք, կրկնիկան իրապէս մահուան եզերք կը խոնկտայ այսօր, Մարաշ, Այնթապ, Հոճըն, Ջէյ թուն, Միս, Միսիս, Ատանա, Տարսոն, Մէրսին, իրերայալարք ջարգուած ու պաշարուած՝ հեռի են ապրելու հնարաւորութիւնէն:

Ձըլլայ որ վերջը խղճահարուէք սիրելիներ:

ԿԻԼԻԿԵԾԻ

Կամաւորական Շարժում

Կրկնիկով վերջին անցուդարձերու մասին հետեւեալ տեղեկութիւնները չը- նորհակալութեամբ ստացանք տեղւոյս Ս. Գ. Հնչակեան կուսակցութիւնէն.—

Կրկնիկով մէջ սկսած է զուտ հայկական գունդերու կազմութիւնը, որոնք բոլորովին անկախօրէն կազմակերպուած են, իրենց սպայախորտով մարզիկնե- րով և վարչութեամբ:

— Մէրսինի մէջ կազմուած է 3 գունդ, որոց ընդ. հրամանատար կար- գուած է Պ. Համազասպ որ համակրելի երիտասարդ մըն է: Այս գունդերը կը կրեն միօրինակ համազգեստ, զէնք և ռազմամթերք: Մարզիկները կը կարգուին Փրանսական իշխանութեանց կողմէ Փրանսական սպաներէ և կը մարզուին Փրանսական զինուորական դրութեամբ:

Այլ կամաւորներու զինուորական գործողութեանց վերին վարչութիւնը կ'պատկանի Ազգ. միութիւններու, թէև անոնք կը կուռին Փրանսացուց հետ, սակայն տուածիւր կ'պարենաւորուին:

Ամեն հայ զինուոր Ազգ. միութեան հետ կնքած է 2 ամսուան պայմանա- գիր, ի հարկին զայն նորոգելու խոտուումով, որ ոչ միայն կը հոգայ իրենց բո- լոր զին. պիտոյքները, այլ նաև կը հոգայ այն բոլոր ընտանիքները, որոնք որեւէ ուրիշ նեցուկ չունին, բացի իրենց կամաւոր արձանագրուած անձերէն:

— Հայկական գունդերու մէջ կ'տիրէ զինուորական կատարեալ արիւրիւն և հայց կողմէ անկանոնապահութեան առթիւ դրած բոլոր վճիռները, անմի- ջապէս կ'զործադրուին Փրանսական զին. իշխանութեանց կողմէ:

— Ազգային միութիւններու կողմէ սկսած է պաշտօնապէս զինուորական արձանագրութիւններ համաձայն զին. օրէնքներու և զերծ մնացըներէ կ'զան- ձուի զին. պէտքը:

ԱՄԱՆՈՍԷ ԼՈՒՐԵՐ

Ամանոսի շջան կէն հասած լուրերը միտքով բական են, որու շրջանակին մէջ եղած 15 գիւղեր կ'պահեն իրենց անկախութիւնէ, կ'նեղուեն միայն սը- նուիդէ և կ'պարենաւորուին Ատանայէ հասած ուստասիկներով:

Ամանոսիք մօտերս պիտի յաջողին ճեղքել Ամանոսը Տէօրթ-Սոլէն բաժնող և իր յարարութեան արգելք ըլլիմացող թրքական զինք:

ԻՐՋԻՆԻ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԸ

Լէզէնուական 40 Հայ կամաւոր էր, որոնք էրզրումի մէջ պաշարուած էին կը յաջողին ճեղքել պաշարման գիծը ու ողջամբ հասնիլ Մէրսին, ուր պիտի միանան Ջօր. Հօրանի զօրասիւնին որ արդէն Մերսին հասած է:

ԼԷԿԷՈՆԱԿԱՆ ՄԱՐԶԻՉՆԵՐ

Ջօր. Հօրան լէզէնին 4 հայ մարզիչներ որոշած է և յանձնած Ազգային միութեան, որպէսզի մարզեն կամաւորական նոր հայ գունդերը:

ՇԱՐԻ 70 ԿՏՐԻՃՆԵՐԸ

Շարի թուրքերու յո՛ւձ ուժը պատճառ եղած է 68 հայ կտրիճներու մահ- ուան, որոնք կուսկիով թէև ճեղքած են չէթէներու գիծերը, սակայն ի- րենցմէ միայն երկու հոգի կըրցած է Ատանա հասնիլ:

ՏԱՐՈՆԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Տարսոնի Սատրպ փաշա որ տեղւոյն մէջ կը գտնուէր կ'աշխատէր որ Յւ. 28ին չէթէները յարձակում գործէին մեծ թիւով և գրաւէին քաղաքը որպէս- զի զօր. Հօրանի զօրասիւնը չհասած Տարսոն յանձնուած ըլլայ:

Սակայն Ատանայէ մեկնող զօր. Հօրան տեղեկութիւն տանելով 150 հայ ժանտարմաներու միջոցաւ կըրցաւ հասնիլ Եէնիճէ, ուսկից 40 հայ կտրիճներու 2000 ոսկի կ'խոտտանայ, եթէ յաջողէին Եէնիճէի մեծ կամուշը օղը հանել որ միտկ ճամբան էր չէթէներու Տարսոն խուժելուն:

40 Հայի ծպտուած կը յաջողին մացառուած ճամբաներէ Եէնիճէի կամու- շը հասնիլ ու հարկ եղած պայթուցիկներով գիշերուան ժամը շին կամուշը օղը հանել անվնաս վերադառնալ:

Այսպէսով, չէթէական օգնական ուժեր չեն յաջողիլ Սատրպ փաշաի օղ- նութեան հասնիլ, և 6 ժամուան կուռէ մը վերջ թուրքերը կուսկիան 3000 մեռեալ և առաքելով Տարսոնէ մինչև Մէրսին կը մարտի չէթէներէ:

Ջօր. Հօրան իր զօրասիւնով արդէն հասած է Մէրսին:

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Մ

ՍՕՎԻԷՏ ԻՌՈՒՍԻԱ ԵՒ ՀՅՅԱՍՏԱՆ

Լօտոնէ կը հեռագրեն Յուլիս 21 թուականով.— Հայոց և Մոսկուայի պօլիէվիքներու միջև սկսած բանակցութիւնները անկ վիճակի մը մասնուած կերեւին: Սովիէթ կառավարութիւնը կը պահանջէ որ Հայաստանի սրտաքին յարտերրութեանց վրայ հակակշիռ մը ունենայ և մասնաւորապէս կը մերժէ արեւմուտեան տէրութեանց հետ անկախօրէն բանակցիլ:

Մոսկուայի կառավարութիւնը նմանապէս առաջարկած է մեծ թիւով բը- բանակցութիւններ զրկել Երևան, որ մերժուած է Հայոց կողմէ:

ԳԷՄԱԼ ԵՒ ԳԵՐԱՍ ԳԷԳԻՐ

Լօտոնէ կը հեռագրեն որ Էրզրումի մէջ այժմ կ'գտնուի 6000նոց թրքա- կան բանակ մը, որոնք իրենց կողպուտի արդիւնքով կ'ապրին Անոնց պետը Բիաղիմ Գարապէթի փաշա, մերժած է հարտակիլ Մ. Գէմալի որ կ'հրամայէր հայերու զէմ քայիլ, կ'երեկ թէ հելլեններու յաղթական յառաջխաղացումէն ի վեր ծանր անհամաձայնութիւններմազած են թուրք ազգայնականներու միջև:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԼԵՀՕՍՏԱՆ

Վարչապիլայէն հասած լուրերու համաձայն յոյս կայ որ Ռուս քօյօնական բանակցութիւնները լաւ արդիւնք պիտի ունենան:

ՀՏԿԱՔԷՄԱԼԿԱՆ ԸՆԲԺՌՈՒՄ

Էսկիլէհիթէ հասած տեղեկութեանց համաձայն տեղւոյն կոց ու թիւնը շատ լուրջ է:

Քլմալականներու և հակաքլմալականներու միջև պատերազմ հաշտուած է և ամէն օր բազմաթիւ սպանութիւններ կը պատահին:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԹՆԿՆԻՌԻՆ ՔՈՎ

Բոլոր նախարարները պալատ երթալով բարի գտնուած մտքով են և վեհափոստութեան:

Ալէքսանդր թագաւորը յայտարարած է թէ ամենալաւ սպաւորութիւններ կը բերէ պատերազմի ճակատէն:

ԼՕՆՏՕՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՐ

Լօտոնէն կը հեռագրեն թէ մօտ օրէն հոն պիտի գումարուի Սովիէթ և գաշնակից ներկայացուցիչներէ բաղկացեալ համաժողովը: Այս ժողովը միմիայն էլեւմտական խնդիրներով պիտի զբողի, Իսախիս և Մ. Նահանգները ևս ներ- կայացուցիչներ պիտի ունենան:

ԴԱՐՁԵԱԼ ՅԵՏԱԶԳՈՒԱԾ

Բարիլէն հասած գիշերային հեռագրի մը կը տեղեկացնէ թէ Աղաշնագրին ստորագրութիւնը յիկաձգուած է 9 Օգոստոս երկուշաբթի օրուան:

ԿԱՐԵՒՐ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՆ ՄԸ

Բարիլէ կը հեռագրուի թէ Յուստատանի Հոմիի գետպան Պ. Քորովիւս Բարիլ հասնելով Պ. Վէնիլիլով ընկերակցութեամբ տեսակցած է իտալական զեպան Պ. Պօնէս Լօնկարիի հետ:

ԱՅՏԸՆԻ ՀԱՄԱՐ 2 ՄԻԼԻՏՈՆ ՏՐԱԽԻՒ

Նախարարական ժողովը խորհրդակցելով որոշեց Այսօրի պէտքերուն հա- մար լուրջ միջոցներ ձեռք տանիլ:

Իւր առաջին քայլ որոշուած է 2 միլիոն տրախիւ տալ բնակիչներուն պէտքերուն համար:

Իսկ քանդուած տուններու վերաշինութեան համար մէկուկէս միլիոն տր- քախիւի գումար մը յատկացուած է:



